զուխքի վրայից մի ձայն։ Ալէքսէյը հեռու փախաւ Մարիայից, ուեց պարոնի վերարկուն և երբ դուռը նրա ետեւից դըրեց, կրկին դիմեց Մարիային։

— Այստեղ խսեալ ձեզ ինձ հետ անյարմար է, դուք ինքներդ տեսնում էք, այնպիսի գործի եմ։ Թողէք ձեր հացէն, ես կ'գամ ձեզ մօտ վաղը։

— Ամուսնացէ՛լ ես! ամուսնացէ՛լ ես! ասում էր Մարիան, չ'լսելով Ալէքսէյին։

— Ամուսնացել է, իսկ ես չէի՛ հաւատում։ Պարոննե՛ր, պարոննե՛ր։

— Գնացէ՛ք, Մարիա Պետրովնա։ Միայն ամօթանքը մնաց ձեզ... Այս բոպէիս կառավարիչը անցաւ... Գնացէ՛ք, ես յետոյ բոլորը կ'բացատրեմ...

Մարիան կ'ասես յատակին կպաւ։

— Դէ՛ գնացէք էլի՛, — պոռաց նէրա վրայ Ալէքսէյը, բաց անելով դրսի դուռը։

Դողդողալով, դժբաղդ Մարիան դուրս եկաւ փողոց։ Միայն պիտակի (уапосак) շնորհիւ՝ որ տուել էր դռնապանը, Մարիան գտաւ Գօրիւշկինի խանը և, գիշերելով բարի ծերունու նկուղում, հետևեալ օրը ճանապարհւեց տուն։

Թրգմ. Աստուածատուր Բէկ-Յովս.
Շարայարելի

ՕՐԱԳԻՐ ԱՌԺԱՄԱՅՆ

ԱԶԳՄԱՆՑ ՄՏԱՑ ԵՒ ՍՐՏԻ

1843

ՑՈՒՆՎԱՐ

2

Եմ ըստ ամէն նորեկ ծաղկունք ի վերայ գերեզմանաց փթթին. և թաղեալքն ի նոսա փտելով փտին։

5

Առաջի Աստուծոյ դիւրին է խոնարհել զի մեծ է Տէր, այլ առաջի մարդկան դըժուարին՝ զի հաւասար է։

6

Շուն շնթէ մարդկան, հացկատակ լինի առիւծու։

7

Ազդէ ի սիրտ ելեալն ի սրտէ։

7

Հոգի զմարմին կենդանացուցանէ, սէր զհոգի։

7

Յանկացեալ ամպոյ հպագոյն դիտել զարեգակն՝ աջողեաց և ոչ ինչ ետես։

8

Բարեկամ ընտիր կէս երջանկութեան։

8

Բարեկամութիւն՝ հոգեւոր ամուսնութիւն։

8

Հաւատք անգործ՝ ասեղն բութ. գործք առանց հաւատոյ՝ ասեղն անծակ. իսկ որ յերկուցն վրիպեալ՝ բութ է իսպառ։

8

Ագահ ի հատուցանելն՝ և զմատունս ընդ պարտուցն ոսկւոյն հաշուէ։

8

Որչափ անձնասէր՝ այնչափ անձին անճանաչ։

12

Դիւրին է զդիւանս մտաց քանդել, քան զմուրհակս սրտի ջնջել։

12

Ջուր փախչի ի մեռելոյ, որ ի սրտին թաղեաց։

12

Սիրտ ուր ստէպ կանգնին և կործանին իրգք՝ նման է կիսաւեր քաղաքի։

13

Հող հաստատագոյն է ի տարերս և ես ի հող գնամ. ջուր երիցագոյն և ընդարձակ, զմայլիմ և ընկղմիմ մտօքս ի նա. հուր եռանդուն՝ և զայն կրեմ ի սրտի, օդ բարձրագոյն և սուրբ, և նմա փափաքիմ և ձգտիմ։

15

Հզօր զէն սատանայի է հաւանութիւն մեր։

digitised by A.R.A.R.@

20

Հեշտութիւն գայ որպէս զաղանի, դառնայ որպէս բազէ։

20

Ջովութիւն ցող ածէ, հովութիւն զեղեամն. քաղցր է բան որպէս զցօղ, այլ ի դոյզն բռնութենէ փոխի ի ձիւն։

20

Մանուկ ի վիշտս ծաղիկ ի դժնիկս։

20

Ամենայն վիշտ վարդ է յառապարս խաչին. այլ ամենայն ուրեք փուշ է։

24

Ցոյս յենարան կամրջոյ. քանի՛ցս զյեցեալն ի նա գետամոյն արար։

24

Սէր սաստիկ և ընդ յոյս ամաչէ։

28

Անօթք եմք կաւեղէնք, ի ցրտոյ և ի տապոյ միօրինակ խորտակիմք։

29

Զարթեայ... և նժոյգ ժամացուցին չափեալ էր զերիր մասն ասպարիզին. ժամք ութ ղանդաղ — երազունք ի բաց կորզեալ էին ութ մասունս յինէն։

29

Զերծար ի սատանայէ՛ լեր զերի փրկողին։

29

Որ մահու ցանկայ, արդէն մեռեալ է։

31

Բարձրագոյն ցուցաւ և Աստուած ի խոնարհելն։

Հ. Գ. ԱԼԻՇԱՆ

Շարայարելի

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Բ.

ՀԱՏՈՒԱԾ ԱՌԱՋԻՆ

ԱԶԱՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Մեր յիշած տնտեսագիտական դպրոցներուն առաջինն է ազատական դպրոցը զոր երբեմն կը կոչեն նաև դասական դըպրոց սա պատճառաւ որ Քաղաքական Տընտեսութեան բոլոր հիմնադիրները, Բնավարականները, Ադամ Սմիթ, Րիգարտօ, Ժ. — Պ. Սէյ, Ստուարտ Միլլ այդ դըպրոցին կը վերաբերին։ Անոնց յաջորդներուն մէջ՝ Տիւնուայէ, Պասթիա, Գուրսէլ — Սընէօյ և Լէօն Սէյ, ի Ֆրանսա. Մաք — Լօտ, Սէնիօր և Գէռնըս՝ յԱնգլիա. Իտալիոյ մէջ՝ Ֆէրրարա. Միացեալ Նահանգաց մէջ՝ Քէրէյ և Ուօլքըր։ Անգղիացւոց ազատական դպրոցը կը կոչուի նաև Մանչեսթըրի դպրոց, որովհետև այս քաղաքին մէջն է որ իր շնորհիւ ազատ փոխանակութիւնը յաղթանակած է։ Սակայն, ազատական դպրոցը ամենէն աւելի Ֆրանսայի մէջ է որ մինչև հիմայ բազմաթիւ հետևորդներ պահած է. Գիտութեանց Ակադեմիային գրեթէ բոլոր տնտեսագէտ անդամները որպէս և Քաղաքական տնտեսութեան ընկերութեան (Société d'Economie Politique) *անդամները ազատական դպրոցին կուսակից են և անոնց երիցագոյնն է Մ. տը Մօլինարի, տնօրէն* Journal des Economistes*ի.*

Այս դպրոցը երբեմն անհատականական (individualiste) *դպրոց ալ կը կոչուի, որովհետև ան՝ անհատին մէջ՝ կը տեսնէ տնտեսական գործունէութեան թէ շարժիչ զօրութիւնը և թէ նպատակը միանգամայն. սակայն այս դպրոցին հակառակորդները՝ զայն ծաղրած ըլլալու համար՝ անոր ողղափառ ածական մըն ալ կուտան, մասամբ անոր տեսութիւններուն փոքր ինչ վարդապետական ըլլալուն, և մասամբ ալ այս դպրոցին կողմանէ իր հակառակորդ-*

ԿՈՀԱԿ *Շաբաթաթերթ, Գրական, քաղաքական, տնտեսական և ընկերային. — Բաժանորդագինն է Պոլիս և գաւառները տար.* 50 *ղրշ.* — *Արտասահման* 12 *ֆր.։* Rédac. du jour. GOHAG
Avenue de la S. Porte
Rue Sépetdji 27.
CONSTANTINOPLE

digitised by A.R.A.R.@